

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գին 10 ռուբլ, կէս տարեկան 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբարակացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»:

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաւ օրերէն):
Յայտարարութիւն ընդունում է առանձին լիզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր ըստին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիական երկու նոր օրէնքներ: Ֆրանսիա: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խմբագր. Մէլիքեթիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ քղեցի Պօղոս Յակոբեան Ռէյիսանց խնդրում է մեղ տպել հետեւեալը: «Այսիկ Մանուկեան մահտեի Մօքոս երկաթադործ այր յիսնամեայ, դէպք սե, հասակը միջակ, 1877 կամ 78 թիւից իր հայրենիքէն դէպի այս կողմերը եկած է և այն ժամանակէն ի վեր ոչ մի տեղեկութիւն հաղորդած չէ իր մասին թէ իր ընտանեաց և թէ իր բարեկամաց: Ուստի կը խնդրեմ որ եթէ վերոյիշեալ մարդու վրա մեր համադրեաներն ունենց տեղեկութիւն ունին, բարեհաճին նրա մասին ցրտորոշ միջոցաւ ծանուցանել:»

Տպում ենք «Մշակի» ներկայ համարում «Վարժարան» ամսագրի յայտարարութիւնը: Ամսագիրը լինելու է մանկավարժական բովանդակութեամբ և հրատարակելու է պ. Նիկողայոս Խօսրովանի խմբագրութեամբ: Ամսագրի պարզամբ բաւական հարուստ է երևում: Տարեկան գինը 5 ռուբլ է:

Երբ հասա Թիֆլիս գնեցի Սիօնիկի մահճան մասին հետազոտութիւն, նոյն օր վաճառեցի: Թիֆլիսում գնեցի Վէրքիցի, որ Սիօնիկի մօտիկ բարեկամէր և նրա հրամանատարութեան տակ երկար ժամանակ ծառայել էր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՍՄԱՅԻ ՄԵԼԻՔԻՆԻՆԵՐԸ

XXXVII.

Երբ Վարաբաղի հայ ժողովրդի մի մասը իրանց մէլքներին հետ գետնազնայն վրաստանում, այդ ժամանակ Վարաբաղի երեք կաթողիկոսները դառնում էին զանազան տեղերում: Նրանցից երկուսը մնացին Վարաբաղում, իսկ միւրը Սիմոն կաթողիկոսը Նիքիտանից մանուկեան Նիքիտանից, Հասան-Ջալալեան Սարգիս կաթողիկոսը դառնում էր Վարաբաղի սահմաններից դուրս, Վանաձի քաղաքում (տես դր. XVII.)

Բայց մի ճակատագրական դժբախտութեամբ, կարծես, անխուսափելի էր դարձել, որ Վարաբաղի մէլքները ուր և գնացին, պէտք էր, որ մի եկեղեցական կուր չար զին նման հետեւէր նրանց:

Հենց նոյն տարեկան մէջ, երբ մէլքները իրանց ժողովրդին հետ գաղթեցին Վրաստան, Հասան-Ջալալեան Սարգիս կաթողիկոսը, իր եղբորորդի Բաղդասարին հետ (որը արդէն վարդապետ էր ձեռնադրված) և իր այլ ազգականներին ու միջաւորներին հետ, Վանաձից տեղափոխվեցան Թիֆլիս (1798—25 մարտ): Հերակ իշխանը սիրով ընդունեց կաթողիկոսին և մեծնուրաց առաջ յանձնեց իր ժառանգ Գիօրգիին, որը աւելի յարգանք ցոյց տուց իր վեհափառ հօրին:

Թիֆլիսում այդ ժամանակ, որպէս Վրաստանի հայոց առաջնորդ, էջմիածին բարձր հոգևոր իշխանութեան կողմից նստած էր Գովհանէս արքեպիսկոպոս:

Մենք լսում ենք որ հանգուցեալ տիկին Հիօնիկի ժառանգութեան կտակաւորները վերջապէս դիտարկութիւն ունեն ձեռք տալ, հանգուցեալի կտակին համաձայն, արեւտագործական գործի հիմնելուն Թիֆլիսի մէջ: Տեսնենք:

Մեղ գրում են ԱՂԱՍԵՆԻՑ: Այս տարի Աղդաշի դաւաճում բոժոփ բերքը շատ սակաւ էր: Մի քանի գիւղերում սրանից մի քանի տարի առաջ բոժոփը ստացվելու է եղել 8—9 հարիւր պուդ տարեկան, բայց այս տարի 3 հարիւր պուդ հաղիւթ է լինի: Այս տարի ստացված ամբողջ բոժոփը սերմի են դրել:

Մենք արդէն հաղորդեցինք այն լուրը, որ յուլի 15-ին գիշեր ժամանակ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գծի վրա գտնվող Լիաքի անոնով գիւղում մի ուսու ծառայող սպանվել է: Այժմ մեր թղթակիցը հաղորդում է որ սպանողները թուրքերն են եղել, որոնք բացի սրանից հրդեհ են ցրել Լիաքի կայարանը:

Շնորհակալութեամբ ստացանք «Միլիտանտի բունդ» վերնագրով մանկական դրոշմը, թարգմանութիւն տիկին Նիկողայի Արխանան-Արքունու: Գրքովը տպւած է Երևանում, 1881 թին «Պատկ» լրագրի տպարանում:

Ժողովրդական մուշտի կուրսերը շարունակվում են Թիֆլիսից ոչ հեռու գտնվող մի քանի տեղում: Զարաբաղի գոյնէ մի անգամ Վրացի հասարակութիւնը հիացած է այդ այգիէս անուանված ժողովրդական խաղերով: Այդ գեղեցիկ խաղերին սկսել է մասնակցել և հայ ամբողջ: Յայտնվեցաւ որ երևելի Գլաշենիկ, որ բոլոր միւս կուրսերին յաղթեց Գլաշենի գիւղացի մի հայ է եղել և գիւղի անոնով կոչվում է դրանելի, այսինքն գլաշենի: Ժողովուրդը այն աստիճան հիւսկուպոս պոչեցին, որը յայտնի էր «գեղարդակիր» մականունով: Գա խիստ գործունեայ և բնաւորութեան տէր մի եկեղեցական էր և մեծ ազդեցութիւն ունէր էջմիածնի վրա:

Սարգիս կաթողիկոսի Թիֆլիսում ընտելութիւն հաստատելը, ի հարկէ, շատ հաճելի չէր կարող լինել «գեղարդակիրին», մասնաւոր երբ նկատում էր նա իշխան Գիօրգիին համակրութիւնը դէպի կաթողիկոսը և վերջինի ձգտումները Վրաստանում այդ ժամանակ գետնազնայն զարաբաղի գաղթականների հովիւը լինելու:

Պէտք է ասած, որ զարաբաղից գաղթականները ցանկութիւնն էլ ձենց այդ էր: Այդ ժողովուրդը սովորած էր էջմիածնից անկախ իր առանձին հոգևոր կառավարութիւնն ունենալ, որպէս էր բաղմադրեան աղուանից կաթողիկոսութիւնը: Իսկ Սարգիսը այդ կաթողիկոսութեան ներկայացուցիչներից մէկն էր:

Վարաբաղի հայերը մի ժամանակ Վանաձիի դաւաճում գետնազնայն, նոյն Սարգիսին իրանց համար կաթողիկոս օձել տուին: Այժմ վրաստան գաղթելով, դարձեալ ցանկանում էին ունենալ իրանց առանձին հոգևոր իշխանութիւնը, անկախ էջմիածնից, նոյն Սարգիսի հովիւութեան ներքոյ:

Իշխան Գիօրգիի յարաբերութիւնները այդ ժամանակ էջմիածնի հետ լարված լինելով, նպատակ էր զարաբաղցոց ցանկութեան իրազեկութիւնն *):

*) Իշխան Գիօրգիի յարաբերութիւնները էջմիածնի հետ լարված լինելու պատճառները, թէ էլ ինքն ըստ ինքեան, շատ հասարակ բաներ էին, բայց կրօնական կէտից նայելով, մեծ նշանակութիւն ունէին: Վարաբաղում ժամանաւոր յայտնվելու ժամանակ, երբ ժողովուրդը տեղափոխվեցաւ Վրաստան, այդ սարաբաղիկ անտարաքաւ իր հետ: Այդ ժամանակ վրաց Գիօրգի իշխանը

այցած է նրանով, որ նրա լուսանկար պատկերը, տկուր կուրծքով ու բութիկ ոտներով քաղաքիս բուր ֆօտօգրաֆների մօտ ծախվում է: Յոյս կայ որ հետզհետէ ճաշակը դէպի հրապարակական կուրսերը այն աստիճան կը դարձանայ մեր մէջ, որ մենք էլ ասիական ապանախցիներ կը դառնանք: Տղէտ ամբողջին միայն կոպիտ զուարճութիւններ էին պակաս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐ

Վերջին ժամանակները Ֆրանսիական պատգամաւորների ժողովը ընդունեց երկու նոր նշանաւոր օրէնքներ:

Առաջին օրէնքը ամուսնական ապագահարգան է, որ արդէն վաղուց ընդունված է Անգլիայում և Գերմանիայում: Ֆրանսիական ազատամիտ և արմատական կուսակցութիւնները վաղուց է որ ձգտում էին այդ օրէնքի պատգամաւորների ժողովի մէջ անցկացնելու, բայց մինչև այժմ ներանց ջանքերը ապարդիւն էին մնում: Վերջապէս այժմ օրէնքը ընդունվեցաւ ձայների ահապին մեծամասնութեամբ: Ամուսնիները բաժանվելով առաջին անգամ, իրաւունք ունեն երկուսն էլ նորից պատկվել: Երկրորդ անգամ պատկվածները նորից իրաւունք ունեն բաժանվել, բայց երկրորդ անգամ պատկվել իրաւունք չունեն:

Պատգամաւորների ժողովի մէջ ապահարգանի օրէնքի դէմ խօսողները կղերականներն էին, որոնք պնդում էին թէ ամուսնական

ապահարգանք անբարոյականութիւն կը մտցնի հասարակութեան մէջ: Ազատամիտ կուսակցութիւնը, ընդհակառակն, պատասխանում էր որ ընտանեկան բարոյականութեան աստիճանը աւելի բարձրացաւ Անգլիայում և Գերմանիայում այն օրից երբ մտցնվեցաւ ապահարգանի օրէնքը այդ երկու երկիրներում: Ի՞նչ է աւելի բարոյական, ասում էին ազատամիտները, բաժանվել միմեանցից, երբ միմեանց համար անտանելի են դարձել, թէ չը նայելով որ ամուսնիները միմեանց համար առեղի են դարձել այնու ամենայնիւ ստիպել նրանց միասին ապրել մինչև մահը: Միթէ դա բարոյական է, երբ երկու ամուսնիների մէջ ծագում են անբաւականութիւններ, երկպառակութիւն, փոխադարձ ատելութիւն, որ դարձնում է նրանց կենքը անտանելի, վատ օրինակ է լինում դաւանների համար, տանում է շատ անգամ դէպի յանցանք, դէպի արեւնահեղութիւն, բայց դարձեալ երկուսն էլ պարտաւոր են անպատճառ միասին ապրել և իրաւունք չունեն բաժանվել ու նորից պատկվել: Կղերականների կարծիքով բաժանվել և ուրիշի հետ պատկվել, — անբարոյականութիւն է, իսկ միասին ապրելով և միջոց չունելով բաժանվելու միմեանց անտանելի լինել, միմեանց հետ ամբողջ կենքը կուռել, միմեանց առեղ, միմեանց խաբել, միմեանց դէմ յանցանքներ գործել, — դա բարոյական է:

Ֆրանսիական կղերականները կատաղած են որ ապահարգանի օրէնքը ընդունվեցաւ պատգամաւորների ժողովում: Բայց շատ կարելի է որ սենատում օրէնքը չի ընդուն-

մաններից անցկենայալու և տեղային հայերից հոգեւոր տուրք հաւաքելու:

Ղուկաս կաթողիկոսը տեսնելով, որ դրանով Վրաստանի հայերը բոլորովին պիտի կարգին էջմիածնից, ստիպվեցաւ դիմում անել: Նա խոստացաւ, թէ իշխանի ցանկութիւնը կը կատարէ, միայն պէտք է Սարգիս կաթողիկոսը անձամբ գնայ էջմիածին, իր խնամարտութիւնը յայտնելու և իր պաշտօնը ստանալու համար:

Սարգիս կաթողիկոսը իր եղբորորդի Բաղդասար վարդապետին հետ գնացին էջմիածին: Թէ էլ այնտեղ խիստ սառն ընդունուելութիւն գտան, այսու ամենայնիւ, Ղուկաս կաթողիկոսը վրաց իշխանի հետ ունեցած վիճարանութիւններին վերջ տալու համար, Սարգիս կաթողիկոսը ձգադրեալ վանքի վանահայր և մի և նոյն ժամանակ Վարաբաղի գաղթականների առաջնորդ: Նոյն հաստատեց իշխան Գիօրգիին իր երկու հրովարտաբաներով, որոնցից մէկը ուղղած էր Վարաբաղի գաղթականների հասարակութեանը, իսկ միւրը իրան Սարգիսին:

Բայց էջմիածնում Սարգիսի խոստումն առին, որ նա իրաւունք չունենայ կաթողիկոսական կնիք կամ տիտղոս գործ անելու, այլ պէտք է կրէ արքեպիսկոպոսի աստիճան, և գործ անէ առաջ նորական կնիք: Թէ էլ Սարգիսը պահպանեց այդ պայմանները, այսուամենայնիւ, նրա հակառակութիւնները Թիֆլիսի էջմիածնական ներկայացուցիչներին հետ խապաւ չէ վերջացան:

Սարգիս գործը հաղել թէ փոքր ինչ կարգի էր դրված, Վարաբաղից յայտնվեցաւ մի նոր կաթողիկոս: Գա էր Նիքիտանից մանուկեան վանքի փոքր Սիմոն կաթողիկոսը, որը, իրրահիւսմանից ներկելով, փախաւ Թիֆլիս:

Բայց այս անգամ Թիֆլիսի էջմիածնականները նրա հետ ցերեմոնիայ չարեցին: «Շահագէշան»

վի, որովհետև սենատի մէջ կղերականները, յետագէմները, խաւարականները և կեղծաւորները, կեղծ բարոյականութիւն պաշտպանողները աւելի մեծ թւով են, քան թէ պատգամաւորների ժողովում: Այդտեղ ընդգիւմարութիւնը ապահարգանքի օրէնքի ընդունվելուն աւելի մեծ կը լինի:

Բայց այնու ամենայնիւ, վաղ թէ ուշ, գուցէ սենատի ուրիշ կազմակերպութեան ժամանակ, ապահարգանքի օրէնքը դարձեալ մի օր կընդունվի և Ֆրանսիական սենատում:

Երկրորդ օրէնքը, որ ընդունվեցաւ պատգամաւորների ժողովում և որ նոյնպէս կատարեցրեց կղերականներին, դա քաղաքական և երգիւման մասին օրէնքն է, որ մտցնվելու է թէ պարլամենտի և թէ դատարանների մէջ կրօնական երդման տեղ: Քաղաքական երդման օրէնքի պաշտպանողները այն տեսակետից են նայում առհասարակ երդման վրա, որ երդման գործողութիւնը պէտք է արտայայտի լինի մարդու ամենամեղեքը, ամենաճշմարիտ զգացմունքները: Ի՞նչ միտք կունենար, օրինակի համար, երգվել տալ մի հրէային Աւետարանի վրա, որին նա չէ հաւատում, կամ քրիստոնեային երգվել տալ Ղուրանի վրա: Այդ տեսակ դէպքում երդումը իրական չէր լինի, քանի որ նա չէր բղիթ երգվողի անկեղծ զգացմունքից, նրա խոր համոզմունքից, երդումը կը լինէր խաբէութիւն, կեղծաւորութիւն երգվողի կողմից և անձնախաբէութիւն երդում տուողների կողմից: Նոյնը և այն անձների վերաբերութեամբ, որոնք չունեն կրօնական որ և է զգացմունք:

Ի՞նչ կէտի, ի՞նչ արժէք ունի կրօնական երդումը այն մարդու համար, որ չէ հաւատում, որ անկրօն է: Իսկ այդ տեսակ անհասանք, որոնք ոչ մի կրօնին, ոչ մի գաւառութեանը չեն պատկանում, խիստ բազմաթիւ են այժմ Ֆրանսիայում:

Երդումը նշանակութիւն ունի միայն այն ժամանակ, երբ մարդը երգվում է այն ըզրգացմունքով, այն գաղափարով, որին հաւատում է: Հակառակ դէպքում երդումը

մի արտաքին ծէս է միայն, որ զուրկ է անկեղծ, ճշմարիտ զգացմունքից: Երդումը չը պէտք է լինի մի կեղծաւոր, միմայն ձեական գործողութիւն, բայց մի անկեղծ, իրական խոստում:

Այն մարդը որ կրօն չունի և որ Աստուծուն չէ հաւատում, նրան ստիպել երգվել Աւետարանի վրա, Աստուծու անունով, կը նշանակի խաբել և խաբվել, կը նշանակի զրդել դէպի կրօնական զգացմունքի սրբապղծութիւնը, կը նշանակի կեղծել, կեղծաւորել, դարձնել երդման գործողութիւն մի կեղծաւոր և յանցաւոր ծիսակատարութիւն, որի գործողութեան մէջն է արդէն նոյն իսկ գործողութեան, տուած խոստման հերքումը: Անհատ մարդը երբ ստիպված է երգվել կրօնի և Աստուծու անունով, իսկապէս ասում է «ես երգվում եմ այն բանով, որին չեմ հաւատում» ուրեմն իսկապէս չէ երգվում, այլ միայն խաբում է:

Այդ պատճառով Ֆրանսիական ազգային ժողովը ընդունեց մի նոր օրէնք, որ փոխարինում է կրօնական երդումը՝ քաղաքական երդումով, այսինքն երդման այսպիսի ձևով, որ կարող է յարմարվել ամեն մարդուն, ամեն անհատին, ինչ դաւանութեանը և պատկանի այդ անհատը, լինի նա հաւատող, թէ անհաւատ, նայելով հարցի վրա այն տեսակետից որ մի զգացմունք միայն ընդհանուր է բոլոր քաղաքացիներին, յատուկ է ամեն մարդուն, որ ոչ գաղափարաբան է ամեն մարդուն, ոչ էլ իրաւագործ մի քաղաքացի: Այդ զգացմունքը պատուի և խղճի զգացմունքն է: Ինչ կրօնի, կամ համոզմունքի էլ լինի մարդը, նա միշտ ունի պատուի և խղճի գաղափար:

Եւ ահա Ֆրանսիական պատգամաւորների ժողովը, կրօնական երդման տեղ, փոխանակ երգվողներին ստիպել երդում տալ Աւետարանի վրա և Աստուծու անունով, ընդունեց քաղաքական երդման հետեւեալ ձևը. «ես երգվում եմ խղճիս և պատւիս վրա»:

Գ. Ա.

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական մամուլի մի մասը քաղաքական է բոլորովին այլ հայացքներ այն յարաբերութիւնների մասին, որ պէտք է կապէ Ֆրանսիան Եգիպտոսի հետ, Ֆրանսիական շահերը այդ երկրի մէջ պաշտպանելու համար: Փարիզի լրագրիները մի քանիսը խորհուրդ են տալիս իրանց կառավարութեանը համաձայնութիւն կայացնել Արաբի-փաշայի հետ այն պայմանով որ եգիպտական «ազգային կուսակցութիւնը», որին առաջնորդում է Արաբի-փաշա, ապահովէ ազատ նաւագնացութիւնը Սուէզի ջրանցքի վրա, Եգիպտոսի միջազգային պարտաւորութիւնների կատարումը և այդ երկրի մէջ ապրող օտարականների անձնական և կայքերի ազատութիւնը:

Եթէ Արաբի-փաշա և նրա կուսակցութիւնը կարողանային ապահովել վերելիշահները, ի հարկէ նրանց հետ համաձայնութիւն կայացնելուց չէին հրաժարվի առհասարակ բոլոր պետութիւնները, որոնք անհրաժեշտ համարեցին դաւանել Կ. Պոլսի կոնֆերանսին: Այդքանը բաւական չէ, եթէ այդ միտքը իրազորեցի լինէր, այն ժամանակ չէին ծագի և այն դժուարութիւնները, որոնք առիթ են տալիս Ֆրանսիական մի քանի լրագրիներին կառավարութեանը այդպիսի խորհուրդ տալ: Եգիպտական հարցը հէնց այն պատճառով Եւրոպայի հոգացողութեան առարկայ դարձաւ, որ Արաբի-փաշա և նրա կուսակցութիւնը ցանկանում են վաճառել Եւրոպացիներին Եգիպտոսից ու խանգարել միջազգային այն բոլոր պարտաւորութիւնները, որ ընդունել է Կայսրէի կառավարութիւնը Եւրոպայի առաջ:

Այն պայմանները, որոնց հիման վրա Փարիզի մի քանի լրագրիները կարելի են համարում համաձայնութիւն կայացնել Արաբի-փաշայի հետ, ճշգրտեմք չեն յայտնված: Այդ տեղ հարցը ոչ թէ Եւրոպայի

այլ Ֆրանսիայի մասին է: Այդ յօդուածներին հեղինակների մտքով, Ֆրանսիական կառավարութիւնը կարող է բաւականաճաղ գործերի այնպիսի դրութեամբ Եգիպտոսի մէջ, որ թոյլ կը տայ միայն Ֆրանսիացիներին օգտվել այնպիսի իրաւունքներից, որոնք գոյութիւն չեն ունենայ միւս եւրոպացիներին համար:

Կարելի է հաստատապէս ասել, որ այդ խորհուրդները տրվում են այնպիսի մարդկերանից, որոնք հասկանում են, թէ ինչպիսի սխալ գործեց Ֆրէյսինէի մինիստրութիւնը, ցոնկանալով ազատվել զինաւորված միջամտութիւնից, որի նպատակն էր վերջ դնել Արաբի-փաշայի և նրա խորհրդատուների հակաեւրոպական ինտրիգներին: Անգլիական զինաւորված միջամտութեան նախադիժը շփոթեցնում է այդ մարդկերանը և նրանք կամենում են ազատել այն միմիստրութիւնը, որ մեղաւոր է իր ազգի առաջ, գործը այդպիսի հետեւանքների հասցնելով:

Ֆրէյսինէ և նրա ընկերները շատ լաւ կանեն, եթէ չեն հետեւի նրանց տուած խորհուրդներին: Արաբի-փաշայի հետ բաւանցութիւնների սկսելը մինչև այն աստիճան ամօթալի և միջազգային կանոններին հակառակ գործ կը լինէր, որ այդպիսի փորձն անգամ կառանձնացնէր Ֆրանսիային միւս պետութիւններից, որոնք այժմ էլ շատ արամադրված չեն բարեկամական յարաբերութիւններ ունենալ Ֆրանսիայի կառավարութեան հետ, որին առաջնորդում են այնպիսի պետական մարդիկ, ինչպէս Վադէլիզատն, Բարտելեմի Սենտ-Պէր և Ֆրէյսինէ: Ժամանակակից Ֆրանսիայի համար վտանգաւոր է և նրա յոյժերից բարձր է դիպլոմատիական բացարձակ արշաւանք սկսել Անգլիայի դէմ:

Ֆրէյսինէի մինիստրութեանը աւելի բարեմիտ և զրական խորհուրդ է տալիս «Temps» լրագիրը, որ պահանջում է Ֆրանսիայի վնասւորված միջամտութիւնը եգիպտական գործերին և այդպիսով բացարձակ պաշտպանում է Գամբետտայի բա-

Յովհաննէս վարդապետի *) ջրթխոտի տուփը, ձեռնածուրի արկղիկի նման երկու խորշեր ունէր. մէկից ինչն էր քաշում, միւսից առաջարկում էր այն անձինքներին, որոնց հարկաւոր էր ուղարկել ողիներին աշխարհը: Սիւմն կաթողիկոսին վիճակվեցաւ վերջին խորշը մէջ ածած թթախոտով կաղաւթել իր պնչերը: Նա թունաւորվեցաւ և թողեց թիֆլիսը, գնաց Գանձալ: Մինչև այնտեղ չը հասած, կաթողիկոսի մարդիկ և զլխի մաղերը թափվեցան և Գանձալում վախճանվեցաւ: Դա Երկու մանկանց վաճի վերջին կաթողիկոսն էր:

XXXVIII.

Մեր պատմութեան նախնիքաց գլուխները մեկուս, Ղարաբաղի միջոց միւսին հակաթու, բազմաթիւ կաթողիկոսների առիթով նկատեցինք, թէ դարերի ընթացքում, ամեն անգամ, երբ ծագել են բուն ազգային կամ ժողովրդական ամենակարեւոր խնդիրներ, մի և նոյն ժամանակ սատանան մէջ է ձգել մի որ և իցէ եկեղեցական կուր, երկպառակութիւն: Դա թէն շատ տխուր է, բայց փաստ է:

Ռուսները արդէն տիրել էին Վրաստանին և պէտք է տիրէին ամբողջ Անդրկովկասին: Հայերի համար սկսվում էր մի նոր կեանք. պարսկական բռնապետութիւնը քայքայվում էր և տեղի էր տալիս քրիստոնեայ պետութեան կառավարութեանը: Հայոց մէկըները աշխատում էին պահպանել իրանց վաղնի իրաւունքները այդ նոր պետութեան հովանաւորութեան ներքոյ: Ժողո-

վրդի կեանքը գտնվում էր փոխանցական տաղանակի մէջ. հաղթումէկ կարծես կային, հաղթումէկ հարցեր պիտի վճռվէին,—հէնց այդ ժամանակներում էլ միաբանում սկսվեցան կաթողիկոսական կուրները, որ զբաղեցրին հայոց մեքերը այնքան ժամանակ, մինչև ռուսները բոլորովին հաստատվեցան Անդրկովկասում:

1799—27 ղեկավարների վախճանվեցաւ Լէւոնտի Գուկասի կաթողիկոսը: Հայրապետական արժուր ժառանգելու համար յայտնվեցան բազմաթիւ նախանձորներ, որոնք մինը միւսին տեղի տալով, կուրի դաշտի վրա մնաց հինգը: Դրանք էին՝ Ռուսաստանի արքեպիսկոպոս Յովսէփը, Կ. Պոլսի պատրիարք Գաբրիէլը, Աստրախանի եպիսկոպոս Նիքիտը և Էնաղեցոյի Կաւրի եպիսկոպոսը, որը սաստիկ խորանայն արար էր և միջոցների ընտրութեան մէջ ամենինի խորութիւն դնել չը գիտէր, իսկ հինգերորդն էր թիֆլիսեցի «բուկուս» (բորկի) կոչված Ստեփան արքեպիսկոպոսը *):

Ռուսաց կառավարութեան նպատակն այն էր, որ Լէւոնտին հայրապետական արժուր վրա նըստէր մի մարդ, որը նշանաւոր ծառայութիւններ էր մատուցել Ռուսաստանին, մանաւանդ նրա արեւելեան պատերազմների ժամանակ, թէ պարսիկներին և թէ օսմանցիներին հետ: Դա էր մեզ նախածանօթ Արդութեան Յովսէփ արքեպիսկոպոսը: Այդ գործունեայ, եռանդոտ եկեղեցականը դեռ ևս պէտք էր Ռուսաց արքեպիսկոպոսները առաջ տանելու համար: Պարսիկներին հետ գործը տակաւին վերջացած չէր. Երևանեան նահանգը և

ուրիշ շատ խանութիւններ դեռ մահմեդականներին ձեռնդրում էին:

Ինքը Յովսէփ արքեպիսկոպոսը վաղուց ձեռնադրւում էր այդ նպատակին, որ ընդհանուր հայոց կաթողիկոսը դառնայ, և նրա մի այդպիսի փառասիրական ձգտումը սաստիկ վաղ ձգեց նրա համարումը մտածող հայերի աչքում, երբ նա իր աւելի ընդարձակ և աւելի ազգօգուտ դադափարներ թողնելով, սկսեց հետեւել իր նեղ, եսական շահերին...

Թէ և նա Լէւոնտինում և հայ հասարակութեան մէջ բազմաթիւ հակառակորդներ ունէր, բայց Ռուսաց կառավարութեան և օսմանցոց Բ. Կրան հաճութիւնը տոտացած, Ռուսաստանից ձանապարհ ընկաւ դէպի Անդրկովկաս, որ գնաց Լէւոնտին հայրապետական օծումն ընդունելու համար: Արքեպիսկոպոսի վարմունքը, որ բոլորովին հակառակ էր հայոց վաղեմի ընտրողական կարգերին, շատ կարելի է, որ մեծ խռովութիւնների պատճառ տար, եթէ ճակատագիրը այլ կերպ չը տնօրէնէր: 1801 թ. փետրվարի 10-ին փառաւոր հանդէսով մտաւ նա թիֆլիս: Նա գտաւ իր բարեկամ վրաց Գիօրգի իշխանին արդէն դրած դադափ մէջ *): Իշխանի մահը արքեպիսկոպոսին սաստիկ տխրութիւն պատճառեց: Նրա հետ մեռան սրբազանի սրտին խիստ մօտ, խորին բաղձանքները...

Իշխանի դադաղը դեռ դրված էր Սիօնի մայր եկեղեցում, երբ 1801 փետրվարի 16-ին, նոյն եկեղեցում կատարվեցաւ Վրաստանի Ռուսաստանի հետ միաւորութեան տօնախմբութիւնը և կարգացվեցաւ Պօղոս I կայսրի հրովարտալը, որ աւետում էր այդ միաւորութիւնը:

*) Գիօրգին վախճանվեցաւ 1800 թ. դեկտեմբեր ամսում:

*) Մեզ յայտնի է Յովհաննէս վարդապետի ով լինելը, կամ ինչու էր կրում նա չափազանց անկանոն, որ նշանակում է Դափ մօտ գնացող: Միայն այսքանը յայտնի է, որ նա Երեւան կաթողիկոսի ժամանակներում Լէւոնտինում դեռ խաղացող միաբաններից մէկն էր:

*) Համարեա այդ ժամանակից սկսվեցան Գաւթի և Կանիկի կուրները, որոնք Լէւոնտին վերջին կաթողիկոսների պատմութեան մէջ խիստ տխուր, մի և նոյն ժամանակ բաւական ընդարձակ տեղ են բռնում:

(Կը շարունակվի)

*) Այդ ժամանակ տեղի ունեցաւ Աւարիայի Օմար-խանի երկրորդ արշաւանքը Վրաստանի վրա:

զաքական այն նախագիծը, որի համար նախկին առաջին մինիստրի վրա այդքան յարգանքներ են: Ֆրանսիայի մասնակցութիւնը զինաւորով ան միջամտութեանը, որի համար այդքան մեծ եռանդով պատրաստուած է անգլիական կառավարութիւնը, միակ միջոց է ֆրեյսիսիէի գործած սխալը ուղղելու համար:

Այն բոլորից յետոյ, որ գործեց այժմեան մինիստրութիւնը Գամբետտային ֆրանսիական ազգի հաւատարմութեանը զրկելու համար, այդպիսի քայլը հաւատարմութեանը կամեաւոր ինքնանպաստութեանը: Իւրաքանչիւր մարդ կը հարցնէ, թէ ինչ հիման վրա իշխանութիւնը և ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան ուղղութիւնը մընում է այն մարդկերանց ձեռքին, որոնք սկզբից անպիտան և վնասակար համարեցին իրանց նախորդներին քաղաքական նախագիծը, իսկ այժմ վերադառնում են նոյն իսկ այդ նախագիծին, հասկանալով վերջապէս, թէ ուրիշ ելք չը կայ: Այսպիսի դէպքերում պարզամտական երկիրներում հարցը վաղուց ընդունված ճանապարհով է լուծվում և իշխանութիւնը անցնում է այդպիսի նախագիծի հեղինակներին ձեռքը, քանի որ ներկայ կառավարութիւնը մի քանի անգամ յայտնել է, թէ նա համաձայն է երկրի շահերի հետ: Յայտնի առաջը, թէ Կերթէք ուշ չէ ուղղվել չէ գործադրվում քաղաքականութեան մէջ:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Վան, 25 մայիս 1882

Ով կան թէ թիւրք կառավարութիւնը բարենորոգում չուզէր անել Հայաստանի մէջ թող զայն այստեղ տեսնէ թէ ինչ զովիկի ջանքեր կան նա այժմ: Բարենորոգումները հիմնական անելու համար միթէ հարկաւոր չէ նախ կրթութիւն տարածել ժողովրդին մէջ և պատրաստել զայն: Ահա թիւրք կառավարութիւնն ալ ձեռք առնելու կան իր կողմէն չափով չափ կայ որ Բ. Կրան կողմէն երկու թիւրք պաշտօնեաներ եկած են այստեղ, վարձարաններ բանալու համար ուր թիւրք և հայ աշակերտներ պիտի ընդունուին, կամ աւելի ձեռքդն անելու, հայեր պիտի ստիպուին աշակերտ առ իրանց դասակներ:

Վասպուրականի նահանգն տարեկան 36,000 օսմ. ունի (զրկել 324,000) բուրի կը տայ արքունի գանձին: Այսուհետեւ այդ փողեր ամբողջապէս Կ. Պոլսի գանձին չը պիտի տրուի, այլ 10% այսինքն 3,600 օսմ. ունի (զրկել 32,400 բուրի) պիտի յատկացուի կառավարութեան կողմէն Վասպուրականի նահանգի կրթական գործին:

Միթէ այս կարգադրութիւններ բարենորոգումներու սկզբնաւորութիւն չեն. միթէ զեղեցիկ չէ այդ երազը, սիրելի ընթերցող. բայց չեմ ուզեր դեռ ևս օրօրել զքեզ այդ երազիդ մէջ: Կոյրն արտասուքի սպասել, փութիւն խաղող քաղել, թիւրքն բարեկարգութիւն յուսով. միթէ սոքա համաման բաներ չեն: Այդ կրթական երկու պաշտօնատարներ յորոց մին միւրիւր (տեսուէ) կը կոչուի և միւսն մուֆթիթիւ (քննիչ) վարձարաններ բանալու պատրաստով, այլ իսկապէս հայ վարձարանները փակելու նպատակով եկած են և այդ նպատակի պիտի ծառայեցունեն երկրի եկամտին տասն առ հարիւր (10%) ֆէնները այդ մարդեր և իրենց առ այժմ ցոյց տուած դրոշներն: Մուֆթիթիւն մի մուլտանդ մուլա է և այնչափ խիստ մուլտանդ որ պարզ տեսակցութեան և իւր շարժումներու մէջ անգամ չէ կարող զինք զսպել և ըրիստոնէից դէմ ունեցած ատելութիւնը չարտայայտել: Իսկ միւսը թէ և ինք իրեն քաղաքավար ցոյց տուող մի աշխարհական մարդ է և այնպէս և այնպէս կրկնի որ իմ չըթուէք միայն մեր մեր քրտն է, բայց սրտին մէջ աստիկ թոյններ լցուած են: Միւսը թէ ուլալի չքանչան ունեցող մի բարձրաստիճան անձ է և մուֆթիթիւ մուլան ալ Եւրոպա պտտած է: Սոքա նահանգապետ փաշային հետ խորհրդակցութեամբ մի մէջ լինի մասարիֆ (ուսումնական ժողով) կը նշանակէ, բայց կրթական ժողով պաշտօն ունի) կը կազմեն որոյ մէջ կը լինին թիւրքաց մուֆթիւն և ու-

րիշ ազգեցիկ թիւրքեր. իսկ հայոց կողմէն անգամ կը նշանակեն Գամբետտ Գեորգ բէկ, Մարուքեան Միրտիլ և Պանիրեան Գալուր Էֆէնդիներ որը նոյն իսկ իրենք փաշային կասն թէ մեք մեր հայերէն լեզուով անգամ հազիւ թէ մեր ստորագրութիւնը գրել կը կարողանաք, ինչպէս յանձն առնուի վարձարաններ բարեկարգելու պաշտօնը: Եւ ցոյց կը տան փաշային հայոց մէջ և դառնուի անձերէ մի քանին, իբր յարմար ընտրելիներ այդ պաշտօնի: Բայց փաշան կը պատասխանէ թէ հարկ չը կայ որ այդ ժողովին անգամ եղողը անպատճառ ուսեալ լինի. հարկ եղածն մեք կը խորհեմք կը կարգադրեմք. դուք ալ ինչ հրահանգ որ տամք ձեզ, գործադրեցէք. մեք մտածելու նեղութիւն, դժուարութիւններ չեմք պատճառել ձեզ: Եւ իրոք հայ անպատեհներն ուղղութիւն և ձանձրոյթ չեն տար. այդ թիւրք կըրթական տեսուչին հայոց վարձարաններ կայցեն, կը քննեն աշակերտներն, առանց հայ պաշտօնակիցներն իրենց հետ ունենալու. ժողովին մէջ որոշումներ կանեն, առանց հայ անգամայն ալ խորհուրդներն իմանալու. և իրաւունք ալ ունին այդպէս անելու, քանի որ այդ հայ ժողովականներ թիւրքերէն ոչ կարող են խօսել, ոչ ալ հասկանալ: Առաջնորդարանը պատուիրեց քաղաքի ֆիտուսան վարձարանի տեսչին, որ այսուհետեւ երբ այդ թիւրք պաշտօնատարներ այցելեն վարձարանին, առանց առաջնորդարանի կողմէն ալ մի մարդ ունենալու իրենց հետ և հրահանգներ տան (որպէս արած են առաջին անգամ), մերթէ զանոնք Կենդրոնական վարձարանը թէ և կառավարութեան հոկոյութեան տակ դրուած է, բայց փութ և կարճ է նորա աշխիւ. ուստի կաշխատեն յուսաւորեցունել նորա տեսուչը, յօգուտ վարձարանին հանդիմանութիւններ անելու չը թոյլ տալով այստեղ. որպէս զի դրամական դժուարութեանց պատճառով վարձարանը փակուի և աշակերտներն ուրիշ բարձրագոյն նախակրթարան չունենալով, թիւրքաց բանակը բուժարիւն է մէք թէ պոն և բն (բարձրագոյն նախակրթարան) երթալ ստիպուին: Բայց մեք կը յուսանք որ վասպուրականի Կենտրոնական վարձարանը հայ բարերաբաց չորհուր չը պիտի ենթարկուի դրամական այդչափ նեղ վիճակին և ազգը կանգուն պիտի պահէ Վասպուրականի մէջ իւր միակ Կենտրոնական վարձարանը, այդ հայկական հոգով դաստիարակութեան վայրը, թիւրքերու, երուստիներու և միւսիւսներու արած կրթական ձգտումներուն առջև:

Թիւրք կառավարութեան արած բարենորոգումներու մի նոր ապացոյցն ալ տամ ձեզ: Տաճկաստանի հայը 22 տարեկ ի վեր մի սահմանադրութիւն ունեցած է որ դարեւ ի վեր ունեցած իւր առանձնահատկութեան համեմատ իւր եկեղեցիները և դպրոցները կառավարելու կանոնադրէն է: 1860 թուականին յառաջ աղբը կառավարող պատրիարքները և ամիրայները ժողովրդէն ընդունուած օրէնքի մը ենթարկուած չէին, համարատուութիւն ատուած բան չը կար գրելով, զմանձ կերպով կը կառավարէին ժողովուրդը: Այդպէս երկարատեւ յետադիմութիւններէ յետոյ, վերջապէս 1860 մայիս 24-ին հաստատուեցաւ սահմանադրութիւնը, ժողովրդին և այն ժամանակի խմբագրաց ստիպմամբ: Սահմանադրութիւնը կրնայ իր թերութիւնները ունենալ (և արդեն ալ ունի). նոյն իսկ խմբագրուած ատենն ալ մտածուած է այդ և յատկապէս կանոն դրուած է որ սահմանադրութիւնը որոշեալ ժամանակներու մէջ վերաքննուի: Բայց ժողովուրդը մեծ կարեւորութիւն կը տայ նմա, յիշելով սահմանադրութեան առաջ ունեցած վիճակը և ի յիշատակ իւր քրէսարկութեան և կամք յայտնելու իրաւունք ստանալուն, ամեն տարի հանդիսով կը տան ան սահմանադրութեան տարեկարձի: Այս տարի վանի թիւրք կառավարութիւնը գործելով եկաւ արդեն ալ այդ հանդէսը որ Այդիտանի Գանդիլոյնը թաղի հայոց զերգմանատունն կառարուեցաւ մայիս 23-ին: Երբ տեսաւ թէ հանդիսին կարգադրի մասնաժողովը որոշ ատենապետ էր պ. Կարապետ ֆիլիպպոսեանց, քաղաքակապէս կը մերթէ հանդէս շանելը, թող տեսութիւն եղաւ: 130-էն աւելի մարդիկ սեղանի նստան որոյ մէջ էին նաեւ Կիւսի. Կամարական բէկ, մուֆթարիֆ (նահանգապետի երկրորդ) փաշան, զօրաց հրամանատար փաշան և այլն: Սեղանին վրայ բաժանիկ առաջարկուեցան Սուլթան Աբդուլ-Համիդի և թիւրք պաշտօնատարներն իրենց. նոյնպէս և Ռուսիոյ մեծագոր աբուլթեան Ալեքսանդր Կապսեր և իւր ներկայացուցիչ Կամարական բէկի, Ներսէս պատրիարքի, իւր-

ման հայրիկի, Երեմիա եպիսկոպոսի, այս հանդէսը կարգադրող հայերնաւոր ընկերութեան և այլն կենաց: Այնուհետեւ կարգը եկաւ յատկապէս պատրաստուած բեմը ելնելով ատենախօսութիւններ անելու: Կառավարութիւնը արդիւնք զայդ և ատենախօսութեան բեմը գործելով չը զնայտնելով թոյլտուութիւն արաւ որ Երեմիա եպիսկոպոս միայն հայերէն ճառարասէ և մի աշխարհական կամ եկեղեցական ալ թիւրք բէկ լինելու իրաւունք տրուէր: Երեմիա եպիսկոպոս շատ գեղեցիկ և եռանդուն կերպով խօսեցաւ. մուֆթարիֆ փաշային և Բեռնի պէյին յայտնեց թէ իրենք մեր եկեղեցական և ազգային ներքին գործերուն խառնուելու իրաւունք չունին, ինչպէս որ ինք ալ նոյն պատճառներով գործերուն չը խառնուէր: Իւր ատածներ թիւրքերէն ալ թարգմանեց որպէս զի լաւ հասկանաւ: Ժողովուրդը ոգեւորուած բուռն ծափահարութիւններով իւր համակրութիւն յայտնեց այդ խօսքերուն: Այնուհետեւ մուֆթարիֆ փաշան և Բեռնի բէկ ուղեցին բեմն հանել խորհրդի Երեմիա անուն մի վատ քահանայ որպէս զի թիւրքերէն լեզուով խօսի ժողովրդին: Այս անբարոյական քահանայ Կեսարիա և Հայաստանի զանազան տեղերն թափառած և իւր խարդախութիւններով և խիստ զայնախեղեցուցիչ բարոյականութեամբ ամեն տեղ հոտեցուցած և վնասուած լինելով, Ներսէս սրբազան պատրիարքը Աղթամարի վանքը աքսորած էր զինք: Բայց Աղթամարի անպիտան կաթողիկոսն ալ, գուցէ նորան հաց կերցունելու իւր շահին վնաս համարելով, ազատ թողած է զինք այժմ: Կառավարական պաշտօնատարները այդ չքահանայի թեւեր մտած, ատենախօսութեան բեմի սանդուղէն վեր կը հանէին որ թիւրքերէն խօսելու և ահա յանկարծ ժողովուրդը պոռայով խուժեց սանդուղէն վրայ և քահանայի զղանցներէն քաշելով կը սպառնային կտոր կտոր անել զինք եթէ սանդուղէն վեր ելնէ և միաբերան կը ձայնէին թէ «Չեմք ուղիւ սորա խօսել...» Այնուօր չքահանայն սանդուղէն վրայ նստած երկու կողմի փաշաներ բռնի կը պոռար թէ չեմ ինչեր և պիտի խօսիմ. նա չէր պատեհուեր Երեմիա եպիսկոպոսին և Գեր. փոխ-առաջնորդին անգամ որը ներկայ էին և իրեն հրաման տուած չէին խօսելու. նա իր յոյսը դրած էր բեմը չը զնայտնող գործերին վրայ որը սակայն մեծ մասով յետ քաշուած էին խուժանք տեսնելով: Վերջապէս մուֆթարիֆ փաշայն և Բեռնի բէկ ստիպուեցան վար ինքեցունել Երեմիա չքահանայն և ընդ հսկողութեամբ հեռացունել հանդիսավայրէն: Այնուհետեւ հրաւիրեցին նշան Երիվանեան երիտասարդին որ իւր պատրաստած թիւրքերէն դրաւոր ճառը կարգադրաց նա չընդունէր, քանի որ ուրիշ աշխարհական չը կար հայերէն խօսող: Մուֆթարիֆ փաշան և Բեռնի բէկ ստիպեցին ֆորթ թուգալեանին որ ելնէ թիւրքերէն լեզուով խօսի: Փորթուգալեան մերթեյ յայտնելով թէ ինք թիւրքերէն չէ կարող ճառ. խօսել, այդ լեզուն լաւ հմուտ չը լինելով, բայց երբ շատ ստիպեցին, եկաւ բեմն. ժողովուրդն ալ թողուց. սակայն երբ բերանը բացաւ խօսելու, բոլոր ժողովուրդը միասին պոռացին. «Հայերէն կուզենք որ խօսի», հայերէն...» Եւ չորս կողմէն արձագանք կը տային հայերէն: Այն ժամանակ ֆորթուգալեան դարձաւ զէպի Բեռնի բէկ և թոյլտուութիւն ինքեցին բեմին վար ինչեցունել Բեռնի բէկ չիթիթուն և միւրը թիւրք լեզու այս ժողովրդական ֆորթուգալեան թիւրքերէն ալ թարգմանեց հայերէն խօսի. ժողովուրդը ինչպէս որ կուզէ, այնպէս արէ, ասաւ: Երբ ֆորթուգալեան կը շարունակէր հայերէն լեզուով իւր հրապարակախօսութիւն, ժողովրդին կողմէն փափաք յայտնուեցաւ Բեռնի բէկի որ ֆորթուգալեան թիւրքերէն ալ խօսի, յայտարարելով թէ իրենք թիւրքերէն խօսելու հակառակ չէին, այլ հայերէնը արգելուէին: ֆորթուգալեան թիւրքերէն ալ թարգմանեց հայերէն խօսածներն: Այնուհետեւ ձիարաւ ալ եկաւ որ յառաջ արգիւած էին: Հանդէսը վերջանալէ յետոյ հանդիսականները աղային երգեր երգելով, զրօշակներն իրենց առջևն պարզած և նուագաժոններն ալ աղգային նուագներ հնչեցունելով, դիմադին իրիմեան հայրիկին տան առջև կեցեցներ առաջին և այնտեղն ալ Հայրիկին ընդ մի վարձարան երթալով, ուստեցին միշտ այնպէս միապիտ մնալ և ուրախ դուրս բաժնուեցան իրար մէջ:

Հրանտ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնից «Temps» լրագրին հետադրում են յունիսի 15-ից, որ այնտեղ պատերազմական մեծ պատրաստութիւններ են տեսնուած: Վալվիլի զինարանում հրաման ստացվեցաւ, չորս օրվայ ընթացքում զէնքեր և հագուստներ պատրաստել ըսան հազար մարդկանց համար: Մեծ գործունեութիւն է նկատվում նոյնպէս չեռաման, պլիմուտեան և պորտսմութեան զինարաններում:

—Երեկայումս Բերլինում գտնված եւպոնական մինիստրի առաքելութեան վերաբերութեամբ «National Zeitung» լրագիրը ասում է հետեւեալը: Խոս մինիստրի վրա պարտաւորութիւն է դրած նախ և առաջ ուսումնասիրել պրուսական սահմանադրական կեանքը: Ինչպէս յայտնի է, Եպոնիային մօտաւորապէս ութ տարուց յետոյ սահմանադրութիւն կը չնորձի, որի օրինակը պրուսական կը լինի: Շատ հաւանական է, որ Եպոնական մինիստրը նոյն նպատակով կայցելի և ալ Եւրոպական պետութիւններին:

—Իտալական պետական մարդ Կրիպպի ի լոյս բնծայեց Գարիբալդի կենսագրութիւնը, որի մէջ հեղինակը պատմում է, թէ հանդուցեալի ընտանիքը հաղորդում է հետեւեալը: Հոգեւոր ժամանակ, Հազարի առաջնորդը յանձնեց իր մեծաւորներին իտալական ժողովրդին տեղեկացնելու, որ իր վերջին օրակները թունաւորում էր այն միտքը, որ Նիցցան կարող է ֆրանսիային մնալ: «Köln. Zeitung» լրագրի ֆարիկ թղթակցի Քոսերերով, այդ տեղը Կրիպպի հեղինակութեան մէջ անախորժ տպաւորութիւն գործեց ֆարիկով, և շատ կարելի է, որ Գարիբալդի արձանը կանդնեցնելու համար այդտեղ բացված ստորագրութիւնը ընդհատվի:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տարօրինակ կտակն է: Աղլիայում շատ միլիոններ կտակում են այնպիսի նպատակների համար, որոնք կամ միտք չունեն, կամ բոլորովին անիրագործելի են: Այդպէս են, օրինակ, բարբարոս երկրներում քրիստոնեայ գերիներին ստրկութիւնից ազատելու համար կտակած գումարները, առաջ վատ համբաւ ունեցող փողոցները լապտերներով լուսաւորելու համար, պատանքներ դնելու համար կախաչանի դատապարտված յանցաւորների համար: Բայց նշանաւոր և յատկանիշ են երկրի և նրա բնակիչների համար այն բաղմամբիւ ծաղրական նպատակները, որոնք շատ անգամ մեծ դժուարութեան մէջ են դնում կտակաւորներին, այդպէս օրինակ, չը նայելով ամեն ընդդիմութեան լօրը կանցելի ցնդորայի տակ անցաւ Թօմաս Դաշի հետեւեալ կտակը: «Կտակում եմ 50 ֆունտ ստերլինգ տարեկան եկամուտ (այս ինչ) իմ հայրենի քաղաքի եկեղեցու փամփուխներին, այն պայմանով, որ ներքանք իւրաքանչիւր տարի, մայիսի 14-ին իմ սղրուակի օրը, ամբողջ օր թաղման գնդակ ածին, իսկ իմ մահուան օրը հնչեցնեն հանդիսաւոր և ուրախակից զանգակներ, որպէս յիշատակ իմ ազատութեան ամուսնական կապից և բռնութիւնից: Աւելի բարեխղճաբար կատարելու համար այդ պայմանը, իւրաքանչիւր տարեկան 50 ֆունտ ստերլինգ եկամուտը երկու մասն է բաժանվում, որի մէջ մասը կը արվի իմ մահուան տարեկարձին, իսկ միւս մասը իմ պրակի տարեկարձին: Եթե ծաղիկ և շատ բնատուր է մէկի կտակը, որով գումար կտակեց եկեղեցական սպասաւորներին այն բանի համար, որ նրանք զարթեցնեն քաղաքի ժամանակ քնող ծաղկաններին և յանկարծ եկեղեցի ներս պրծնող անտէր շներին դուրս անեն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԳ, 28 յունիսի: Թող է տուած եօթներորդ ժողովը բնագէտների Օդեսայի մէջ: Ենթադրված է ինստիտուտների աշակերտութիւններին կիրակի ու տօն օրերին թողնել իրանց ծնողների մօտ: Ծովային մինիստրութեան կառավարիչը հիւանդութեան պատճառով ուղևորվում է արտասահման: Նրան ժամանակաւորապէս կը փոխարինէ փոխ-ծովապետ Շվարցը: ՍՕՖԻԱ, 28 յունիսի: Բօլշարեան մեծ ցա-

Հանգուցիւն է յայտնում Սկոբելեվի մահան պատճառով: Ամեն տեղ հոգեհանգիստներ են կատարվում: Սոֆիայի գլխավոր բուժարար Սկոբելեվի անունը կը կրէ: ԱՆԷՔՍԱՆԿԻՍԱ, 28 յունիսի: Որովհետեւ եզրկատարները չեն դադարեցնում աշխատանքները ամրոցների մէջ, ծովապետ Սէյմուր պահանջում է յանձնել իրան ամրոցները, սպանալով նրանց ամբակոծել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. 87 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90 ռ. 62 1/2 կ., չորրորդ 90 ռ. 25 կ., հինգերորդ 90 ռ. 1/2 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ռ. 25 կ., երկրորդ 211 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 37 կ., երկրորդ 89 ռ. 1/2 կ., երրորդ 89 ռ. 21 կ., ոսկի 8 ռ. 21 կ.: Ռուսաց 1 ռ. լոնդոնի վրա արժէ 23, 87 պէնս, Ամստերդամի վրա 121 պէնս, Բուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 204 մարկ 50 պֆ., Գաբրիելի վրա արժէ 252 ֆրանկ: Բորսայի տրամադրութիւնը դանդաղ է:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիստեմ է ապրում, յանձն է առնում պարագայ երեխաների հետ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցեով. Манглисѣ, Габрієль Мирзоевъ, въ рошѣ, дача Марѣи Тимоѣевоѣ.

ՍՏԱՅՎԱԾ է գրելու թուղթ առաջին տեսակի 4 ռ. 50 կ. օգնան, բրինձ 6, 8 և 9 կ. ֆունտը, խնայի գինի ջերմի դէմ 1 ռ. 40 կ. շերտ, փռի տարափոխիկ հիւանդութեան դէմ, լուացքի և սամովար սրբելու համար: ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻՑ: Նոյն տեղը լէպեզկաներ, ցիտրուս և շերտեա ծառաւի դէմ: Մածկոցներ 4 ռ., շոկոլատ երկու բաժակի համար 5 կոպէկ: Երկաթէ մահճակալներ 8 ռ. և այլն: 9—10

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօթիկական պրոսպեկտի վրա, տուն ճարտարապետ Բէլզի: Գրասենակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տոներէրից:

Ներսիսեան դպրանոցի բարձր դասատան աշակերտներէց մինը կամենում է պատրաստել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար: Ցանկացողը թող դիմեն Մովսիսովի կարվանսարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը № 1.

Խոնարհաբար խնդրում են ԵՐԵՎԱՆԻ պատուելի պարոններին, տիկիններին և օրհորդներին, որոնք ՊԱՐՏ են ֆուտ մեր ԽԱՆՈՒԹԻՆ, վճարել իրանց պարտքը մինչև յուլիս ամսի 1-ը: Հակարակ դէպքում ստիպված կը հրաւ. ակեմ առանձին յայտարարութեամբ նրանց անուններն ու ազգանունները:

Գեորգ ԽԱՆԱԶԱՏԵԱՆՑ

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ

ТУРЕЦКІХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԹԻՖԼԻՍԻՄ ԶՐԱՆՑԻ ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՖԼԻՍԻ Բաղադրային վարչութիւնը, հրաւիրելով ցանկացողներին յանձն առնել ջրանցքի կառուցումը Թիֆլիսում, յայտնում է ընդհանուր դիտութեանը որ առաջարկութիւնների ընդունելութիւնը շարունակվելու է Բաղադրային վարչութեան մէջ մինչև 1/13 սեպտեմբեր ամսի 1882 թ.:

Պրոէկտի, նախահաշիւի և սկզբնական պայմանների հետ կարելի է ծանօթանալ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

Թիֆլիսի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի և Օդեսայի քաղաքային վարչութիւնների մէջ, նոյնպէս և վարչապա քաղաքի նախագահի կանցլէրիարկայում:

ԱՐՏԱՍՏԱՆՄԱՆՈՒՄ.

ՓԱՐԻՋՈՒՄ „Ingenieur“ լրագրի խմբագրութեան մէջ (Rue Fidelité, 9) 107-ԴՈՆՈՒՄ „Engineering“ լրագրի խմբագրութեան մէջ (35—36 Bedford Street, Strand, W. C.), ԲԵՐԼԻՆՈՒՄ. A la Direction du Commerce et des Consuls, au Departement des affaires Etrangères, ՎԻԵՆԱՅՈՒՄ „Allgemeine Bauzeitung“ լրագրի խմբագրատան մէջ, (Waldheims Verlag, Taborstrasse, 52) և ՎԵՐՋԱՎԵՆ ԲԵՐԼԻՆՈՒՄ „Deutsche Bauzeitung“ լրագրի խմբագրութեան մէջ (Bahnhofstrasse, 4, Berlin S. W.)

2—3

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat

1. Neuermarkt 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Առաջիկայ Օգոստոս ամսից հրատարակուելու է Թիֆլիսում մեր խմբագրութեամբ „ՎԱՐՃԱՐԱՆ“ մանկավարժական ամսագիրը հետևեալ ծրագրով՝ ա. Ազգիս վեհափառ հայրապետի և թեմական վերատեսուչների կարգադրութիւնները ազգային ուսումնարանաց վերաբերութեամբ: բ. ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ: գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ ազգային պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, տոհմագրութեան և լեզուի վերաբերութեամբ: զ. ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ԲԱԺԻՆ—քննական յօդուածներ դասագրքերի և մանկական ընթերցանութեան գրքերի:

Կ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ—զանազան տեղեկութիւններ ուսումնարանական կեանքից: զ. ՄԱՆԿԱՎԱՆ ԲԱԺԻՆ—վէպեր, զրոյցներ և այլն մանկանց ընթերցանութեան համար: է. Հանդիմանք, խնդիրներ և խաղեր մանկանց համար:

Ը. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Մեր ամսագրին խոստացել են գործակցել ազգային ուսումնարանների մէջ գործող յայտնի անձինք, որոնք ծանօթ են Հայ հասարակութեանը իւրեանց աշխատութիւններով մանկավարժական ապարիզում:

„Վարժարանը“ կը հրատարակուի ամիսը մի անգամ, բացի յունիս և յուլիս ամիսներից, իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի չորս տպագրական թերթից in 8°:

Առաջին համարը լոյս կը տեսնի օգոստոսի 15-ին:

Վարժարանի տարեկան գինն է թէ՛ Թիֆլիսում և թէ՛ այլ քաղաքներում ՀԻՆԳ ռուբլի:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում խմբագրութեան գրասենակում (Սաղոմայա փողոց, տուն Մարգարեանի) և պարոն Եփրեմ Մատուրեանի մօտ (Գլորցովայա փողոց): Իսկ օտարաքաղաքացիք դիմելու են խմբագրութեան հետևեալ հասցեով. Тифлисѣ, въ Редакціи педагогическаго журнала „Варжаранѣ“. Tiflis Redaction du journal pedagogique „Varjaran“.

Խմբագիր—Հրատարակող ՆԻԿՈԼԱՅՈՒՄ ԽՈՐՈՎԱՆԸ

1—3

ԱՆԳԻՎՈՎԱԿԱՍԵԱՆ ՊՐԻՎԱԶԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽԱՍՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ Կովկասեան նախկին փոխարքայի թոյլատուութեան հիման վրա և 1876 թ. հրատարակված հասարակական հովանաւորութեան կանոնների 941 յօդուածի համեմատ ընդունում է ՍՈՒՏՔԵՐ ՇԱՀՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ինչպէս մասնաւոր ԱՆՁԻՆԳՆԵՐԻՑ, նոյնպէս և կառավարչական ՀԻՄՆԱՐԿԱՆՈՒԹԻՆԵՐԻՑ, հասարակական և դասական գումարները կարգադրողներից: ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՆ ՎՃԱՐՈՒՄ է

ա) Անժամանակ, այսինքն ցպահանջ.....	40%	տարեկան
բ) մէկ, երկու և երեք տարով.....	4 1/2%	"
գ) չորս և հինգ տարով.....	5%	"
դ) վեցից մինչև տասներկու տարի.....	5 1/2%	"
ե) տասներկու տարուց աւելի.....	6%	"

ՏՈՎԱՆՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ և մուգքերի վերադարձնելը կատարվում է ԱՍՏԵՆՈՐ, բացի շաբաթ և տօն օրերից:

1—3

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ան կ իւ ն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵՔԵԼ ամենայն տեսակի, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 ռ., չամուռաններ 250—25 ռ., սակփոխներ 1. 30—12 ռ., ԷՆԷՆ ԳՈՒԿՆԵՐ ԶԱՆԱԿԱՐՀԻ 6—35 ռ., մարաններ (поребцы) 6—25 ռ., ս ա մ օ վ ա ռ ն ե Ր 60 կ.—1.25 ֆունտը, կուլոնների պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ համալով ամաններ, ու մ ի վ ա լ ի կ ն ե Ր մ ր ա մ օ ռ ն ի 38 ռ.—15 ռ., հրացաններ երկու լույսնի 6—32 ռ., ու լ զ լ զ ի ռ ն ե Ր ա մ ե ն ա յ ն տ ե ս ա կ 3. 50—30 ռ., պատրաններ. (գուլաններ) ընթերցողի, սիգար Բէնգալի ֆարքիկից, պապիրոս և թամբալու կուշնարովի գրկի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ թէ՛ 8 (այլ) ԵՎ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, ըրակիտ. (սուխար չայու և կաֆէի) Լինէմի. կօֆէ Լինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայկիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկա յ գինեվաճառների, հանքային և դարեցրի (длѣя зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пучк), զուլթուկներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆարքիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժնուր, գրչակովներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուլոններ 1—40 մինչև 3—20 կ. պրիբուր միս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանիայի չայնիկներ, կաֆէի նիկներ ամենայն տեսակի, ջաղաքային կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրակավա կարօրկն 18 կ., փաթ Ֆրանսիայի ծախող, թուղթ փողոցի, կանկրետներ, սուրբուչ, մաղիտ, գրիչ երկաթէ, գրչակով, քարտատատի, թանաք, թանաքամաններ, պրեպարատներ, գլաններ սեղանի և չայու ֆրաժէ, վարչապի և բրիտանիկ դուժնուր 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուս միջկէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուլտ, պողսապրկաններ վարչապի, Ռեզիւնի ԿԱՐՏԵՐԻ, ամեն տեսակ, գուլթաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուլտ, շապիկներ, մարդկերանց դալուստիկներ, գոնակներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկ և շքի. սանդուղի շերմայու ոսկրէ, գուտապրեզովի և փայտէ, չոտկաններ գրի, շքի, սապովի, պղի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատիկ կօժի և շալէ (гарусь) ֆէլչատիէք մարդկերանց և կանանց, պրոմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտավէա ջրեր, պուզրա, Գլիցերին ջրի քաջախ, հոտավէա պարաշոներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցնելու ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՆԻԿՈԼԱՅՈՒՄԵԱՆՑԻ պահեստում: (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցեով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

82—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ան կ իւ ն № 13.